«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ի՞նչպես ձևավորել արժեքային համակարգ սովորողների մոտ Ազգային երգ ու պար առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Ավոյան
(Շիրակի մարզ , Գուսանագյուղի միջնակարգ դպրոց)

Գուսանագյուղ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

1.Արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում, արժեքային համակարգի սահմանումը, էությունն ու նշանակությունը.....5

2.Արժեհամակարգի ձևավորումը որպես արդի մանկավարժության կարևոր պահանջ..... 8

3.Սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորման առանձնահատկությունները ազգային երգ ու պար առարկայի դասաժամերին..... 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 17

Ներածություն

Ազգային Երգ և Պար առարկան դասվում է այն առարկաների շարքին, որոնց միջոցով հնարավոր է լինում աշակերտների մեջ սերմանել արժեքային համակարգ հասկացությունը: Առավելապես Ազգային արժեքային համակրգ : Նրանց մոտ պետք է ձևավորել այնպիսի արժեքային համակարգ, որի շնորհիվ նրանք կկարողանան կյանքում ճիշտ տեղ գրավել : Աշակերտները պետք է գիտակցեն, որ հենց դպրոցում է ձևավորվելու իրենց արժեքային համակարգը, պետք է վերցնեն ուսուցիչների հնարավոր բոլոր գիտելիքները, ուսուցիչներն էլ իրենց հերթին պետք է աշակերների մեջ ձևավորել ոչ միայն համամարդկային բարոյական արժեքներ այլ շեշտադրեն ազգային արժեքները :

<u>Թեմայի արդիականությունը</u>: Արդի աշխարհում հատկապես մեծ ուշադրության է արժանանում կրթությունը: Լինելով բավականին ճկուն ոլորտ այն ենթարկվում է շատ ազդեցությունների այդ ազդեցությունները ունենում են ինչպես դրական այնպես էլ բացասական հետևանքներ: Խոսելով հատկապես կրթության կազմակերպման մասի չենք կարող չնշել, որ այնպիսի պետություններում, որոնք ունեն ընդգծված ազգային դիմագիծ այդ ազդեցությունները ավելի ճկատելի են դառնում:Այդպիսի ազդեցություններից է գլոբալիզացիան: Փոքր Պետությունների գոյության համար 21-րդ դարում առանցքային մարտահրավեր է համարվում գլոբալիզացիան : Այն իրենից ենթադրում է ազգային պետությունների դերի նվազեցում և վերացում:Բազում ոլորտներ ներթաթանցելով այն չի շրջանցել նաև կրթական ոլորտը: Սոցիալ-քաղաքական փոփոխությունները ևս իրենց ազդեցություն են ունենուն նոր սերդնի մոտ արժեհամակարգի ձևավորման վրա «Կրթության դերը աճում է. միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը զարգացնելով համակցության, հանդուրժողականության համագործակցության և արժեքային որակներ:»: Այսպես է նկարագրված ժամանակակից կրթության դերը ՀՀ հանրակրթության 2004թ. պետական կրթակարգում : Այս բնագավառի գերակա խնդիրների , չափորոշիչների, սկզբունքների շարքում խիստ կարևորվում են սովորողների բարոյահոգևոր նկարագրի , արժեքային նկարագրի, ազգային և սոցիալ-մշակութային զարգացման հարցերը և մարդասիրական դաստիարակության պահանջը . որոնք անվիճելիորեն իրականացվում են բարոյահոգևոր դաստիարակության գործում: Ազգային դաստիարակությունը ենթադրում է նաև համամարդկային որակների ձևավորում:Այսօր առավել քան երբեք արդիական է մնում հայեցի դասիտիարակության հարցը,արտաքին շատ ազդեցություններ հաճախ հետին պլան են մղում ազգային արժեքների ուսուցում կրթական գործընթացում

հրապարակ բերելով ավելի գլոբալ արժեքներ և հիմնահարցեր ինչպիսիք են ռասայական ,սեռական և կրոնական փոքրամասնությունների հանդեպ հանդուրժողականությունը և այլն:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները</u>:Հետազոտության հիմնական նպատակը ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ: Աշակերտների շրջանում ձևավորել ազգային արժեհամակարգ: Շեշտադրելով հոգևոր և մշակութային արժեքները, բարձրացնել դրանց դերը և նշանակությունը միաժամանակ զարգացնել հետաքրքրությունը , Հայ մշակույթի և պատմության նկատմամբ: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում՝

· Բացահայտել արժեքային համակարգի ձևավորման հիմնական նախադրյալներն ու պայմանները,

· Պարզաբանել ազգային արժեքային համակարգի դերը դասաժամերին

·Լուսաբանել ազգային արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

Գլուխ 1.Արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատում են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Դպրոցում բոլոր առարկաներն իրենց ներդրումն ունեն երեխայի արժեհամակարգի ձևավորման գործընթացում: Դեռահասության տարիքում է ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և, առհասարակ, առաջնային արժեքների համակարգը: Այս շրջանում անչափահասը սկսում է ակտիվորեն վերաիմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում է դուրս գալ ավագների ազդեցության ոլորտից, նրա համար ավելի կարևոր է դառնում շրջապատի կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունելի նորմերին և հաստատվել տարեկիցների միջավայրում: Իսկ դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է այսօր արդեն նրա մեջ ձևավորել առողջ արժեքներ, ապագայի, հասարակության համար դաստիարակել քաղաքակիրթ քաղաքացիներ: Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունն աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը[1]

[1] Ա. Ե. Օլշանսկիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., 84 էջ

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ[2] :Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումն աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքներն աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Կձևավորեն արժեքներ ունող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենահիմաստալից կրթական համակարգը:

Կրթության գենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

· լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային–պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք

· Ունենա ազգային ինքնագիտակցություն

· Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

· Ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,

· Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,

·Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ Ազգային երգ ու պար առարկայի դերը: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով

[2] Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

աշակերտների մեջ սերմանել ազգային , քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի[3]:Ամփոփելով վերոնշյալ տեսակետները ու մոտեցումները՝ կարող ենք նշել, որ արժեհամակարգի ձևավորումը հանդիսանում է դպրոցի կարևոր առաքելություններից մեկը, ուստի այն պետք է դառնա ուսուցման գործընթացի անբաժանելի տարր և իրականացվի ուսուցման յուրաքանչյուր մեթոդին զուգահեռ: Աշխարհաքաղաքական վայրիվերումների ճանապարհին կարևոր դեր ունի ուսուցիչը՝ արժեհամակարգ ձևավորելու և հումանիստ,հայրենասեր,ընտանիքը կարևորող սերունդ դաստիարակելու գործում:Երեխաները դպրոց են գալիս տարբեր ընտանիքներից և նրանց համար ընդունված արժեհամակարգային չափանիշը պայմանավորված է իրենց միջավայրով: Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է արժեքային որակների,կամքի,բնավորության,զգացմունքների,հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: ՈՒսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի (խաղ,էքսկուրսիա,դասղեկական ժամ,արտադասարանական միջոցառում,հարց ու պատասխան) ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

[3] Ի. Փարեմուզյան, Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, էջ 398:

Գլուխ1.2 Արժեհամակարգի ձևավորումը որպես արդի մանկավարժության կարևոր պահանջ

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է ,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անբակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, 10 ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Անշուշտ այս երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն: Առաջինը երբեմն զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում. երեխաները լսում են, թե որքան լավ բան է ազնվությունը, արդարությունը, տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն,սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտումն իրենց ուսուցիչների, ծնողների կամ շրջապատողների կողմից: Բնական է, որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում: Մյուս կողմից էլ՝ նոր մոտեցումը շատ ազատական է, և վտանգ կա, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը: Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին ուսուցչի վարքագծով: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել հանրակրթական դպրոցներում ուսուցչական կադրերին ինչպես նաև մանկավարժների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների

հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Մյուս կարևոր սկզբունքն այն է, որ արժեքը պետք է սովորել ոչ թե լսելով, այլ կիրառելով: Ուստի պետք է նրանց հնարավորություն տալ կիրառելու իրենց սովորած արժեքը, այն ձեռք բերել իրենց իսկ փորձառության հիման վրա: Դրա համար, անշուշտ, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր, որոնք համապատասխանում են երեխաների տարիքին: Շատ կարևոր է նաև խրախուսանքը: Խրախուսելով երեխային կարելի է ոգեշնչել, մղել որոշակի գործողությունների, ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ամրապնդմանը:

Ինչպես արդեն նշեցինք նախորդ շարադրանքում, սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորման հարցում պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ազդեցություն են գործում սովորողների վրա: Այդ հանգամանքներն են ինչպես ավանդական պատկերացումները, այնպես էլ տարիքային գործոնն ու սովորողներին շրջապատող աշխարհն ու մարդիկ:

Նախորդ շարադրանքի շրջանակներում ներկայացրեցի նաև այն հիմնական մեթոդները, որոնք, մեր դիտարկմամբ, կարող են կիրառվել որպես արժեհամակարգի ձևավորման միջոցներ:

Աշխարհաճանաչողական այս վայրիվերումների ճանապարհին կարևոր դեր ունի ուսուցիչը՝ արժեհամակարգ ձևավորելու և հումանիստ, հայրենասեր, ընտանիքը կարևորող սերունդ դաստիարակելու գործում:Երեխաները դպրոց են գալիս տարբեր ընտանիքներից և նրանց համար ընդունված արժեհամակարգային չափանիշը պայմանավորված է իրենց միջավայրով: Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է արժեքային որակների,կամքի,բնավորության,զգացմունքների,հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: ՈՒսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի (խաղ,էքսկուրսիա,դասղեկական ժամ,արտադասարանական միջոցառում,հարց ու պատասխան) ընտրության միջոցով Այս առումով կարող ենք ասել որ Ազգայի ն երգ և Պար առարկայի դասավանդումը դպրոցներում առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Այն օժտված է դպրոցականների արժեհամակարգի ձևավորման հսկայական ներուժով: Մեր Ազգային երգ ու պարի մեջ արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը,աշխարհընկալումը:Այս ամենն է,որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին:Այսպեսդպրոցականները պետք է հասնեն այն գիտակցության, ըմբռնեն և հասկանան որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ,հանդուրժողականությամբ,մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ,այլև՝ պահպանմամբ:Սերունդ,որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները,աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Գրիգոր Տաթևացին՝ խոշոր գիտնականն ու փիլիսոփան, ասելիքաբան իր բարոյախոսական

խրատներում ընդգծել է, որ սովորողների գործունեությունը պետք է ծառայեցվեն ժողովրդին, հասարակությանը, հավատին, որ հայ երեխան պետք է հայմեծանա, հայեցի դաստիարակվի:

Գլուխ3.Ազգային երգ-պարի ուսուցումը որպես արժեհամակարգի ձևավորման գլխավոր տարր

Ազգային կամ ազգագրական երգն ու պարը դա այն երգն ու պարն է,որը կատարվում է տվյալ ազգի տարածքում ապրող ժողովրդի կողմից՝ հիմնված էթնիկ ծեսերի և սովորույթների վրա: Ազգային երգերում գովերգվում է տվյալ երկիրը, հողը,աշխատանքը, նկարագրվում տոներ, պատմվում պատերազմների մասին, հերոսների՝ նրանց կատարած սխրանքների մասին, սեր, կարոտ և այլն: Մինչև մեր օրերը պահպանվել են մի շարք հայ հեթանոսական ծեսերին վերաբերող երգեր և պարեր, քրիստոնեական եկեղեցական ծեսերի՝ սուրբ ծննդյան տոնի, հարսանեկան, համբարձման տոնի, խաղողի օրհնության տոնի ծեսեր: Պահպանվել են հայկական տարբեր գավառների պարեր: Հիմա ազգագրական խմբերի կողմից հիմնականում կատարվում են Սասունի, Մուշի, Վանի, Տարոնի, Տիգրանաերտի տարածաշրջանի՝ սերնդեսերունդ փոխանցված ազգային, ռազմահայրենասիրական երգեր և պարեր:

Զարգացած տեխնոլոգիաների և հարուստ ինֆորմացիայի դարաշրջանում մենք կարողանում ենք հաճախ ունկնդիրը լինել տարբեր ազգերի էթնիկ երգերին և տեսնել տեսագրություններ նրանց պարերի մասին: Ազգային արմատներից չհեռանալու համար մենք ունենք պարտականություն՝ դարերի խորքից մեզ հասած մեր երգն ու պարը ճիշտ մատուցել ու փոխանցել մեր հաջորդ սերունդների Կոմիտասն ասել է. «Ամբողջ մտատանջությունս է հասցնել աշակերտներ, որոնք դպրոցներու մեջ տեղ գրավեն, նվիրվեն ազգային երաժշտության ուսումնասիրության, տարածեն ժողովրդի մեջ հայ երաժշտության ոգին, որպեսզի ժողովրդին մեջ ազգային երաժշտության խոսքը մարմնանա, և անոր ազդեցության տակ ժողովուրդը, թոթափելով իր թույլ պատյանը, մտնե վերակենդանացման շավիղին մեջ: Ինչքան բաղձալի էր ունենալ այս նպատակով առանձին վարժարան, որի միջոցով մեծ արդյունք կարելի կըլլար ձեռք բերել»:

Ուսուցիչ պարոններ ու քույրեր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է, սխալ ուղղությամբ՝ ազգ մը կը խորտակեք վերջը: Մանուկն ինչ զգացումի տակ որ ըլլա, այդ զգացումը կարտահայտե որոշ երգերով: Երգը ներքին հոգեկան զգացումին արտահայտության մեկ ձևն է, ուրեմն շարժում մըն է, և պարն էլ ինքնին շարժում մը ըլլալով, երգը կգուգորդի պարին հետ: Զգացումներն ինչ ուղղությամբ որ ընթանան, երգն ու պարն ալ նույն արտահայտությամբ երևան կուգան: Արդ կրնա ըմբռնվիլ, թե որքան կարևոր են մանուկին դաստիարակության մեջ երգեցողությամբ ընծայվելիք

հոգածությունն ու պարտավորությունը»:

Ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացումը կարևոր նշանակություն ու դերակատարում ունի հատկապես «ազգային երգ ու պար» առարկայի դասընթացում: Նշված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով, այնպես էլ ուսուցչի գործոնով, նրա օգնությամբ: Ազգային երգ ու պարի ուսումնասիրումը հայրենագիտական թեմաների ուսուցման ժամանակ ոչ միայն համալրում է աշակերտների գիտելիքները, զարգացնում է նրանց մտածողությունը, այլև ներարկում է նրանց մեջ սեր հայրենիքի պատմության ու մշակույթի նկատմամբ, բարձրացնում է ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Ազգային երգ ու պարի ուսումնասիրման գործընթացը ուսուցիչը կազմակերպում է որպես դասարանական ու արտադասարանական աշխատանք՝ զուգակցելով ուսուցանվող թեմային: Արտադասարանական աշխատանքի բազմապիսի ձևերի (խմբակներ, էքսկուրսիաներ, գեղարվեստական երեկոներ, դասեր բնության գրկում և այլն) կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցչուհուն ապահովելու դաստիարակության ու ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության այնքան կարևոր գծի զարգացումը, ինչպիսին ճանաչողական հետաքրքրությունն է: Դա լավագույնս իրագործվում է՝ աշակերտներին հայ երգ ու պարի մասին տեղեկատվություն տալով: Այսպես, օրինակ, տարիների ընթացքում ուսուցչուհին նպատակասլաց կերպով աշակերտների մեջ զարգացնում է մեծ հետաքրքրություն երգ ու պարի նկատմամբ: Սկզբնական շրջանում ուսուցչուհին, ելնելով թեմայի անհրաժեշտությունից, նրա առանձնահատկություններից և պահանջներից, մշակում է աշխատանքային պլան: Զմռռանալով ինքնակրթության կարևորությունը՝ պլանում տեղ է հատկացնում աշակերտների ինքնուրույն աշխատանքների կատարմանը: Հայկական երգերի ու պարերի մասին նյութերի հավաքագրումը դպրոցականի իմացական գործունեության մղելու և նրանց ինքնուրույն ստեղծագործական գործունեությունը կազմակերպելու կարևոր քայլ է: Սովորողների ճանաչողական ունակությունները պետք է զարգանան այնպես, որ նրանք ոչ միայն կարողանան ճանաչել մեր երգերն ու պարերը, այլև որոշակի նորություն մտցնեն դրանց մասին իրենց ըմբռնումների, իմացածի մեջ: Ստեղծագործական աշխատանքը սովորողից պահանջում է խոր ու կայուն գիտելիքներ, հոգևոր ուժերի լարում, ստացած գիտելիքները կյանքում կիրառելու ունակություններ, ակտիվ ուշադրություն և դժվարությունները հաղթահարելու մեծ կամք: Այսպիսով՝ հայ երգի ու պարի ուսումնասիրման կարևոր քայլը դրանց դրանց հաղորդակից լինելն է, ինչը ներգործում և երեխաների ռազմահայրենասիրական դաստիարակության և ապրումների վրա՝ նպաստելով նաև սովորողների ինքնուրույն մտավոր գործունեության զարգացմանը, հետաքրքրությունների ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազգային երգ և պար առարկային ներդրումը,Դպրոցներում խթանում է ազգային արժեհամակարգի ձևավորմանը : Երկար տարիներ դպրոցից ակնկալվել է միայն գիտելիքի փոխանցում, սակայն կրթության առավել կարևոր գործոն է նաև դաստիարակությունը: Գիտելիքը ձեռքբերովի է, արժեհամակարգը՝ մնայուն: Եվ այդ արժեհամակարգի ձևավորողը հայ ուսուցիչն է :Այս առարկան աշակերտների մոտ դաստիարակում է հայի ոգի, բաղաքացիական կեցվածք որը արդեն դարձել է ինքնության մի մաս: Այս հետազոտությունը կատարելիս հանգեցինք մի ծարք եզրակացությունների՝

- Այսօր՝ գիտության և տեխնոլոգիայի զարգացման այս դարաշրջանում, երբ ամեն ինչ արագ փոփոխվում է և միաձուլվում իրար,պետք է անել ամեն ինչ, որպեսզի մեր ազգային մշակույթը չկորչի: Իսկ դրա պահպանման համար պետք է երեխաների մեջ սերմանել սեր և նվիրում մեր ազգային մշակույթի հանդեպ: Երգն ու պարը այդ մշակույթի ամբաժանելի մասն են:
- Պետք է փոքրուց երեխայի մեջ սերմանել սեր մեր ազգային արժեքների նկատմամբ, չէ՞ որ նրանք են մեր վաղվա օրվա մարդիկ:
- Երեխան, դպրոցական հասակի տարիքին հասնելով, դուրս է գալիս ընտանեկան նեղ միջավայրից, հաճախում է դպրոց՝ ներգրավվելով հասարակության մեջ: Նա բացի իր հարազատներից շփվում է նաև այլ մարդկանց հետ՝ հասակակիցներ, մանկավարժ–, որոնցից վերցնում է այն ինչ տեսնում ու լսում է: Իսկ նրանք էլ իրենց հերթին պետք է լինեն ուշադիր և հոգատար երեխայի հանդեպ:
- Դպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման գործում կարևոր տեղ ունի ազգային դաստիարակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, «Ընտանիք և ազգային հոգեբանություն», նյութերի ժողովածու, Երևան, 1991:

2. 2.Հրանուշ Խառատյան –Առաքելյան, «Հայ ժողովրդական տոները»

3. . Երկխոսություններ դաստիարակության մասին: Գիրք ծնողների համար //Վ. Ն. Ստոլետովի խմբագրությամբ, Երևան, 1990:

4. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.,
5. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ

6. Ավագյան Ն., Հայկական ավանդական տարազը, Երևան, 1983:

7. Գասպարյան Վ., Հայկական ավանդական տարազի կիրառումը պարարվեստում

8. Ա. Ե. Օլշանսկիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ
9. Ի. Փարեմուզյան, Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնականհաստատությունում,
10. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002

1.